



626

5 H. 4






ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ

ՄԱՐԿԱԲԵՐԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԸ



1-2-3

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՆ ԵՆ
ԵՆ ԵՆ
ՏՈՒՐՈՒ

ԿԵՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զօն սո՛ւ Սրբազան Բահանայայեան՝ Պիոս Ժ.

Զօն սո՛ւ Առնէն. Պօղ. Պէս. Ժգ. Թերզեան. Կարդ. Պսր.

Մեր ծրագիրը	էջ 1
Կրօնք	» 5
Կարողիկոսական կոնյակի վրայ տեսութիւն	» 8
Մեկնութիւն աւետարանի	» 13
Այլեւայլ	» 19



ԱԶԳ

1. Կարողիկէ Արձագանգը սո՛ւ պշտօն կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիզանդացի բաժանորդացիներն է՝ մեկ մեծիս անոնց հաւեար ո՛ր ի Կ. Պօլիս՝ Կարողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուղեն բաժանորդագրուիչ: Ուղղակի Հռոմ դրկելու հաւեար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու՝ ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականապէս պիտի ճշդուին: —

Մեկ թիւը՝ մեկ րանտիկն է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եւրոպ տերք:

3. Խնդրագրութիւնս պարտաւորեալ չի անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դրկուած ո՛ւ եւ ի յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Չեղագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցեանց հաւեար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի:



ԳԻՈՍ Ժ.
ՍՐԲԱԶԱՆ ԲԱՆԱՆԱԾԱԳԵՏ

ԱՌ ՎԵՀԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՊԻՈՍ Ժ.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍՏՈՍ ՄԵԾԻՆ ԼՈՈՂՄԱՅ

ՈՒՐ ԵԴԻՆ ԶՎԷՄՆ ՀԱԻԱՏՈՑ ՀԻՄԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՍ ԴԷՏՆ ԵՒ ԱՐՈՒՅԵԱՆ ԱՆՎԱՆԵԼԻ

ԿՐՕՆԻՑ ԻՐԱԽԱՆՑ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Ձրնծալեալն ի յոյս զառաջինն զթերթ

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Որ 'ի Տօնական Ասուրս

ԱՌԱՔԵԼՈՅ ԳԼԽԱՌՈՐԻՆ ՊԵՏՐՈՍԻ

Եւս Է՛

ՄԻՐՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐԶԻ

ԳՍՑ ԶԱՅՆ ՏԱԼ ՀԱԻԱՏՈՎՔՆ

ՁՈՐ ԸՆԿԱԼԵԱԼ ՍՈՐԱ Ի ՆՈՐՈՒՆ ԱՆՄՈԼԱՐ ԱԻԱՆԴՈՒԹԵՆԷ

Լուսաւորեաց գլխաւարային կողմանս Հայաստան Աշխարհի

ԱՇԽԱՏԱԻՈՐԻ ՍՈՐԻՆ

Ի Հաւաստիս անկայեանս հպասակութեան որդիական մեծարանաց

Ե Ր Ա Ր Տ Ա Գ Է Տ Ս Ր Տ Ի

Ը - Ը - Ն -

29 Թ--Ի--
Հ--Ը-- 1911
1 Թ--Ը--

Ողջ Լէր, կեանք յաւերժ

ԼՈՎՈՒԱՊԵՏ ՄԵՐ ԱՐԹՈՒՆ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՌՈՅԵԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԻՐԱԿԱՆՑ

ՅԱԶԳԻՍ ՄԵՐՈՒՄ

ՔԵՒ ԼԻՅԻ ՊԵՏՐՈՍ ՎԱՀԱՆ ՄԵՐ ԱՄԴՈՒԹԵԱՆ


ՔԵՒ ԼԻՅԻ ՊՕՂՈՍ ԻՐԱԿԱՆՑ ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ձի մնասցուի յաւիտ

Ի ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԿԵՆԴՐՈՒՄԻՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՈՂՁ ԼԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ԲԱՐՐՈՐՈՒԹԵԱՄԲ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԳԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Առաջին Տարի

1 Յուլիս 1911

Թիւ 1. եւ 2.

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Բաւական ժամանակէ ի վեր է որ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի յատուկ ու պաշտօնական թերթ մը բողոքալի դարձած էր՝ մանաւանդ յորմէ հետէ երջանկայիշատակ Ագարեան Պատրիարքի օրով հրատարակուող « Պատկեր » հանդէսը դադարեցաւ : Այս զգալի պակասը կը շեշտէին ժամանակիս կրօնական, գիտական և բարոյական ասպարէզին մէջ գոյացած անհրաժեշտ պահանջներն . ինչպէս նաև մարդկեղէն մտաց հիանալի գիւտերն ու հնարքն, միանգամայն անոր աղետալի վրէպք ու մոլորութիւնք . մէկ կողմանէ աշխարհային կենցաղը բարւոքելու համար ի գործ դրուած անեղ ճիգեր, միւս կողմանէ ընկերութիւնն և անոր դարաւոր անհպելի սրբութիւններն հիմն ի վեր տապալող մոլոր դրութիւններ . երկնքէն ու ճշմարիտ երջանկութենէն հեռացում, և մերձեցումն ի կորուստ : Արեւմտեան ըտուած քաղաքակրթութեան ամենէն յուր մասերն մեծաւ գիւրութեամբ մուտ գտած

են միշտ յԱրեւելք՝ դժբախդաբար, այդ թիւնալից գաղափարներն անլուր ճիգեր կը թափեն Արեւելքի խաղաղ միտքը պղտորելու, անոր կրօնքն ու բարոյից երջանկութիւնը կապտելու, նիւթականը միայն ջամբելով, թերի և հիւժախտաւոր անունդ: Երկիւղալից է իրաւցնէ տեսնել թէ այս մոլորուած թիւնը ստէպ ազգայնոց կրօնական անձանց մէջ ևս մուտ գտած և մինչև իսկ սուտ գիտութեամբ քօղածածուկ կը կրկնուին կրօնական պարբերականներու մէջ իսկ: Մեր Հասարակութիւնը, որ իւր ամբիօփ և անսասան կաթողիկէ սկզբունքներով անդրդուելի պատուար մը կը կազմէր արեւելեան ազգերու մէջ, գամ քան զգամ սասանեցաւ, և թունաւոր աղբիւրներու հոգեկորոյս ցայտումներն չիթ առ չիթ սողոսկեցան՝ անզգոյշ ընթերցումներու, անժոյժ խօսակցութիւններու, թիւրիմաց ազատութեան միջոցով, հարկ էր շտապել՝ չարն ի սերման խեղդելու և ուղղափառ սկզբունքները փրկելու համար: Ահա թէ ինչու անհրաժեշտ դարձած էր զուտ և անկեղծօրէն ուղղամիտ պարբերական մը, գո՛նէ առ այժմ շարաթաթերթ մը: Ժողովրդոց փրկութիւնը կամ կորուստը տպագրութեան գործ դարձած է այժմ միկ: Մեծն Լեոն ԺԳ. կ'ըսէր. « Ջանացէք կանգուն պահելու և տարածելու բարի հրատարակչութիւնը »:

Յեւրոպէ՝ անկրօն և անբարոյական թերթերու դէմ կը կանգնին արիաբար՝ խորին համոզմանց, ազնիւ զգացումներու, բարոյալից գաղափարներու աւետարանիչ թերթեր, որոնք մեծաւ յաջողութեամբ կը մղեն ճշմարտութեան սրբազան պայքարը ընդդէմ Չարին որ կարծես դժոխոց թոյնը կը ժայթքէ. այսպէսով կը պահպանեն երկիւղածներուն հաւատոյ դանձը, թեւրահաւատները կը սրտապնդեն, մերթ ևս ոտխները և ընդդէմ խթանի աքացողներն անգամ յուղղութիւն կը բերեն: Դարուս ճշմարիտ և ամենագովելի Առաքելութիւնն է հրապարակագրութիւնը: Բայց միթէ արժանի չէ՞ ցաւոց ու տխրութեան՝ տեսնելը թէ Հաջ ազգին մէջ այս ոգւով տողորեալ որչա՛փ քիչ, աննշան թերթեր կան — եթէ կան ևս. — մինչդեռ անկրօնութեան, անբարոյութեան, զաւելտով ծպտեալ անսանձ ստահակութեան կրից առաջնորդողներն նոյն իսկ անմեղ մանկութիւնը կը վրդովեն կ'ապականեն: Հետեւաբար պատասխանատու դէտք ախոյեան կանգնելու են ուղղութեան և կրօնից կրօնից՝ որուն կը պարտի հայ սերունդն իւր փրկութիւնն ու գոյութիւնը:

Այս է ուրեմն մեր կէտ նպատակին. ճշմարտապատու կրօնի, անաղաւաղ գիտութիւն, օգտակար տեղեկագրութիւն անցելոյն սրտմտքաւոր և աժմէական լուրերով: Կ'օգտէ հոս քանի մը մասեր յաւաջ բերել կաթողիկո-

սական պաշտօնագրէն որ ուղղուած էր առ Նախագահն խմբագրութեանն Յանձնաժողովոյն, որով մանր պիտի պարզուի Շարաթաթերթիս առաջադրեալ յատակագիծը :

« Կաթողիկէ Եկեղեցւոյ և մեր Նուիրապետութեան պատուոյն և իրաւանց դէմ տարածուած թիւր ու դիտմամբ խեղաթիւրուած տեղեկութիւններէ զգուշացնել մեր սիրելի Հասարակութիւնը, անոր մէջ յառաջագիտութեան և բարեկարգութեան մղումն ընդհանրացնել. մեր ժողովուրդը, բարի տրամադրութիւն ունեցող անձինքը իրարու՝ և իրենց հոգեւոր պետերուն հետ շարունակ յարարերութեան մէջ գնել » : — Ահա ընդհանուր գիծերն, զորս կ'ամփոփէ հետեւեալ հակիրճ մանրամասնութեամբք .

« Ա. Պէտք է ջանալ դարուս և օրուան մոլորութեանց դէմ ջատագովել ճշմարտութիւնը, կորովի, բացայայտ և ամենուն զիւրամատչելի փաստերով » :

« Բ. Պէտք է զբաղիլ այն տեսակ նիւթերով որ օգտակարապէս հետաքրքրեն մեր հասարակութեան ամէն զատակարգերը. զանց չառնելով օրքան զօր յառաջացող գիտական տեսութեանց հրատարակութիւնները, ո՛րչափ որ օգտակար կրնան ըլլալ մեր պիտոյից » :

« Գ. Տեղեկագրել նաեւ թիւերու և Առաքելութեանց վրայ, քննելով անոնց ծագումն ու հաստատութիւնը, աժմեան վիճակը, պէտքերը, դրպրոցները, մինչև իսկ տեղական արհեստները ու ելեմտական վիճակագրութիւնը » :

« Դ. Հարկ է նաեւ աւելցնել Հռովմայ, կաթողիկէ աշխարհի և մեր Պատրիարքարանի, ինչպէս նաեւ ազգիս կարեւորագոյն յուրերն » :

Ահա այս ծրագրի հանգումատիպ հետեւողութեամբ երևան կուգայ մեր Կաթողիկէ Առձագանգը, և երկու գլխաւոր մասերու բաժնուած է. Ա. կրօնական — գիտական — պատմական — գրական. Բ. Տեղեկագրական :

Ա. Մասին մէջ բացարձակապէս վարդապետական ու պաշտպանողական է իւր դիրքը, ու ո՛չ բնաւ յարձակողական. նկատելով լուսաւորել կաթողիկէ ժողովրդեան միտքը, հրահանգել զայն յուղղափառ վարդապետութեան, գուն գործելով առաջնորդել ընդ արքայական պողոտայ Ս. Աւետարանի և Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ անթիւր և անվթար հաւատալեաց և բարեկարգական կանոնաց : Պահելով հանդերձ իւր անսայթաք ու վեհագի անկողմնակալութիւնը, պիտի չթերանայ հերքելու սխալ վարդապետութիւններն ու դիտումնաւոր գրոյցները նկատմամբ Պատրիարքարանի տիրական գաղափարաց, իսկական սրոշումներուն ու նպատակին :


Բ. Մասը պիտի կազմեն լուրեր կաթողիկէ աշխարհէն և Հայ — Կաթողիկէ Պատրիարքարանէն, ինչպէս նաև Հայ համայնքէն: Պիտի ունենայ նաև քաղաքական երևելի դէպքերու շարաթական ամփոփոյց մը: Պատրիարքարանիս այս մինակ պաշտօնական թերթը առ այժմ կը սկսի ի Հոռվմ, փոխադրուելու համար ի Կ. Պօլիս՝ ի դարձին Կ. — Պատրիարքի:

Բնական է որ թէ՛ Պատրիարքարանիս և թեմերու և թէ՛ աղգային դէպքերու և ներքին քաղաքականութեան վերաբերեալ լուրերը՝ ցորքան ի Հոռմ է, պիտի չկարենայ Արձագանգը ի հեռուստ մանրամասնօրէն տալ, ժամանակագրական անճշտութեան անպատեհութեան բերմամբ. բայց ասոր հարկ եղած կարևորութիւնն և լրութիւնը պիտի ընծայուի երբ հաստատուի ի Կ. Պօլիս:

Թերթս ամենուն դիւրամատչելի ընելու համար, թեթեւ բաժանորդագրին մը գրուեցաւ. որով կը յուսանք որ իր ընթերցումն ընդհանրանալով, ակնկալուած օգուտը ամենուն պիտի ընձեռէ:

Նոյնպէս սիրելի է մեզ յուսալ որ բարեսէր կղերն ու նաև մատենագէտ հաւատացեալք իրենց գրաւոր թանկագին օժանդակութիւնն ու գործակցութիւնը չպիտի զլանան մեզ. երախտագէտ յօժարութեամբ պիտի բաժնանք մեր սխնակներն անոնց յօդուածոց առջև, նիւթերու պէսպիսութիւնն ու ընթերցումը աւելի ևս հաճելի և օգտակար ընելու գիտաւորութեամբ:

Ահա այսու անկեղծ մտօք է որ Բարւոյն և Ճշմարտին Արձագանգը կ'ուզէ ըլլալ մեր շարաթաթերթը. երանի՜ թէ ամբողջ ազգը նոյն անկեղծ փութկոտութեամբ հիւրընկալէր զայն՝ կրկնելով. « Եկն քարքառ յերկնից »:



ԿՐՕՆՔ

« ԱՆՆՁՅԻՐ ԶԲԾԶ »:

Ա.

Կը նայիմ ետիս վրայ, կը խոնարհիմ ու կը վսեմանամ միանգամայն. կը նայիմ երկինք ու կը սլանամ հոն՝ գտնելու համար Այն՝ որուն ցոլացումն տեսայ յիս: Ո՛րքան իրաւունք ունի եղեր հին Փիլիսոփայն առաջարկելու որ Տաճարներու ճակատն փորագրուէին այս երկու բառերն. Ճանչցի՛ր զհեգ: Վա-
սըն զի ճանչնալ իրօք և ամբողջովին իր անձն՝ ստոյգ և փաստացի միջոց մ'է ճանչնալու զԱրարիչն, զոր Տաճարներու մէջ կը պաշտենք: Երբ կ'ան-
դրադառնամ վրաս ու կը տեսնեմ իմ մէջս այն լոյսը, որ միտք կ'ըսուի, որնոր նիւթական բոլոր պայմաններէ վեր է գերազանցօրէն՝ իր թափանցի-
կութեամբ, իր ինքնուրոյն գործունէութեամբ, կ'իմանամ որ անմիւթ ու ինք-
նագոյ էակի մը հաղորդակցութիւնն է որ ունիմ, Անոր երեսին մէկ ճառա-
գայթն է որ գրոջմուած է յիս. « Նշանցս — Բեւ լայ երեսոց Կոյ »: Այդ ճրագին առաջնորդութեամբ կ'իջնեմ, կը սուշիմ հոգւոյս խորերն և հոն առ ճշմարիտն և բարին զետեղուած բնական մղումն, ծարաւն, կ'ապացուցանէ որ կայ բացարձակ ճշմարիտն ու բացարձակ բարին, որուն համար ստեղծ-
ուած է հոգիս, իմ եռոս ամբողջ: Եւ եթէ մարմնոյս զարմանալի հիւստեւո-
քն ու կազմն ալ ուսումնասիրելու ըլլամ, վերջապէս հարկ է Գիրահրաշ Ա-
րարիչն ճանչնամ և հոս է որ կը ստիպուիմ անձիս փոքր աշխարհէն Տի-
եզերաց մեծ աշխարհին դառնալու և անոր հրաշակերտ զարմանալեաց վրայէն մինչև յոտս Ամենատեղծ էակին սլանալու, զԱյն ճանչնալու, սիրե-
լու, պաշտելու և Անոր ծառայելու համար: Վասնզի երկինքը կը պատմէ Աստուծոյ փառքը և հաստատութիւնը կը վկայէ թէ Անոր ձեռաց ստեղծ-
ուածն է: Այս սրացումն յայտնապէս բանականութեան ընդունն է, անոր բնական մղումն և անհուն անջրպետ մը կը լեցունէ. Աստուծոյ և մարդուն միջև կը գնէ յարաբերութիւն մը, Կրօնքը:

Նխորապաշտ՝ ետութեան թանձրութիւնը միայն կը նկատէ, անոր մէջ կ'ընկզմի ու կը մնայ հոն. սրացք չունի. հետեւաբար կ'ըսէ Եմբեղովիւնի հետ՝ թէ ճշմարիտն գտնելու համար շատ անձուկ են մեր զգայարանաց ճամ-
փաներն: Բանապաշտն՝ չարաչար հպարտ ետութեան ցոլքերով՝ կը մերժէ նայ-
իլ վեր, կը թողու հոն զԱյն՝ որմէ է և բաւական կը սեպէ զինքն իրեն ու կը ձը-
գէ Աստուծոյ և մարդուն միջև տհաւոր ունայնութիւն մը: — Բայց հարկ է

գոհացնել սիրտը, որուն բողոքը շատ զօրաւոր է. և ահա ինքնապատան միտքը կը ջանայ խարել սիրտը այլեայլ գրութիւններով, զորս սակայն հարկադրուած է շարունակ փոխելու, որովհետեւ գոհացում չեն տար: — Այսպէս Գաղաթիւաբայաշը՝ կը ջանայ կեդրոնացնել իր մէջ՝ ճանաչողական կարողութեանց ամէն շարժումներն ու կ'ամփոփէ իր մէջ՝ զանոնք ազատ ու անկախ նկատելով արտաքին աշխարհէ, մինչդեռ եթէ կ'ուզենք ուսումնասիրել և ճանչնալ նոյնինքն մեր ներքին կարողութեանց բնութիւնը՝ հարկ է որ նախ կերպով մը օտար նկատենք զանոնք՝ այսինքն իբրեւ մեզմէ դուրս գտնուող առարկայ մը՝ և այսպէս մեր հասկացողութեան բնական ճամբուն մէջ դնելու համար: Մեր մտաց կարողութիւնը ներքին է, բայց անոր գործողութիւնը արտաքին առարկայից վրայ յածելով կ'անդրադառնայ իր վրայ: Ուստի արտաքին աշխարհի բողոքն, որ բարձրաձայն կը քարոզէ տիեզերաց Տէրը, մեր ենթակայականութեան մէջ պատրաստուած ու անկից ստեղծուած ձայնի մը արձագանգը չէ, այլ ընդհակառակն անոր ձայն տուող իրական, մեր մտքէ ու կամքէ անկախ, անհերքելի ու անխափան վկայութիւն մը, որ կը ստիպէ մեր ենթակայականութեան ալ իրեն հետ դուռնելու Աստուծոյ գոյութիւնը ու մարդուս առ Աստուած վերաբերումը՝ կրօնքը: — Դրականապաշտն՝ հակառակ գաղափարապաշտի ներքսացման, ընդունելով արտաքին աշխարհի ազդեցութիւնը մեր հոգեկան գործողութեան վրայ, չարաչար զօրաւոր կը նկատէ անոր իշխողութիւնը ու կը յաղթահարի անկից, կը նետուի անոր գիրկը անպայման վստահութեամբ: Այսպէսով ո՛չ միայն կ'անտեսէ, այլ կ'ուրանայ իսկ իր մտքի ուժը, ինքնուրոյն զօրութիւնը, անոր թռչուն և անկապտելի սլացքը և նիւթական հետեւողութեամբ կը քալէ փորձառական կեանքի մէջ, կարեւորութիւն տալով միայն՝ այսպէս ըսեմ՝ անոր արտաքին կեղեկին: Ասոր համար միտքը պարզ հայելի մ'է, յորում կը պատկերանան փորձառական կեանքի բներեւոյթներն, և նա կըրաւորապէս կ'ընդունի տպաւորութիւններ և անոնցմէ կը մղուի հետեւելու. ինքիրմէ միտքն գործողութիւն չունի, ընդունած տպաւորութեանց վրայ անդրադարձում չունի, չունի մէկ խօսքով թանձրէն վերացեալն, եզականէն ընդհանուրն քաղելու զօրութիւնը: Այս գրութեան հետեւողն ալ նիւթապաշտին պէս վերացում չունի և թէպէտ փորձառական գիտութեանց մէջ շարունակ ինքնիրեն հակասելու դատապարտուած՝ այսու հանդերձ գէթ սկզբունքով չընդունիր կարելիութիւնն դրական բներեւոյթներէն ընդհանուր սկզբունքներ քաղելու և անոնցմով յառաջանալու անժանօթին մէջ: Բնութիւնը իրեն համար Դեմոկրիդէսի ջրհորն է, որուն անմատչելի խո-


բութեան յատակն թաղուած է ճշմարտութիւնը: — Սկեսիկը՝ կը հաւանի գաղափարապաշտի անվստահութեան արտաքին աշխարհի վրայ և միանգամայն դրականապաշտի անվստահութեան՝ իր մտաց ու ետին վրայ: Ամէն գրութեանց մութ կողմը, տարակուսական մասը, անոնց անհաստատութիւնը և յարատե փոփոխութիւնը՝ ապացոյց են իրեն կարծելու որ չարունակ տարակոյան ապահովագոյն ճամբան է մարդուս համար, և Անաքսիորասի հետ կը գոչէ որ մութ է չորս գիտ, ամէն բան խաւարի մէջ է:

Խեղճ մարդկութիւն. կը զգայ ճշմարտին ու բարւոյն պէտքը շարունակ. չի կրնար զսպել իր բնական մղումն առ ճշմարտն ու բարին և չի գտներ երկուքն ալ իր նորանոր գրութիւններով: Ամէն շարժում ուրիշն իրեն հանգիստն, իրեն դադարն, իր կեդրոնածիգ կապն ունի. մարդո՞ւս միայն ձգտումն՝ մշտնջենաւոր ծփանք մը պիտի ըլլայ ունայնութեան մէջ: — Ո՛չ, բնութիւնը՝ խորթ մայր չէ, որ մեր մտքի ու սրտի այդ մղումն տալով՝ խաբած ըլլայ զմեզ. մեր միտքն պէտք ունի բացարձակ ճշմարտին. հարկ է որ այդ գտնուի, հարկ է որ կարենանք անոր հասնիլ. մեր սիրտն պէտք ունի կատարեալ բարւոյն՝ հարկ է որ այդ գոյութիւն ունենայ և կարենանք մենք անոր մէջ հանգչիլ վերջնականապէս: — Շփոթել ճշմարտութիւնը կարծեաց հետ, միտքն խաղցնել մ'է. ուղեկորոյս ճամբորդին բուն ճամբան ծածկելով՝ հոս հոն, ետ առաջ տարուբերումն է որ բնականաբար բնաւ տեղն չի հասցներ: Կատարեալ բարին հնարաւոր նկատել աշխարհի վրայ, շփոթել զայն անձնական շահու և օգտի հետ՝ մարդկային սրտի ունայնութեան վրայ յուսախաբութիւն մը աւելցնել է, պարսպութեան գարման տալ ուզել՝ ընդարձակելով զայն:

Ահա արմատ ու պատճառ ներկայ դարուս անկրօնութեան, որ վերջ ի վերջոյ հին դարերու հեթանոսութեան վերակոչումն է, որով մարդկային ջգագրգիւ տուալտանքն տարակուսին մէջ կը նորոգուին: Միայն ուղղագտան Բրիստոնէութիւնը՝ բացարձակօրէն ճշմարիտ և ճշմարտօրէն ստոյգ իրողութեանց հիմը դրաւ հաւատքով և գերահրաշ ցոյցերով. մարդն այսպէս ազատեցաւ խաւարէն, որուն մէջ կը խորխափէր, աչքը բացաւ, սլացք ստացաւ և այս հոգեկան վիթխարի շարժումին արդիւնք եղաւ աշխարհի վերանորոգումը, քսանդարերու զարգացումը զոր լրօրէն իրեն կ'ուզէ վերադրել անկրօնութիւնը: Սպասենք քիչ մ'ալ որ քալէ առաջ աստուածութիւնը, մնայ ինքնիրեն անհաւատութիւնը և քրիստոնէութեան բարերար ազդեցութեան քորր մնացորդներն մեկուսին, այն ատեն պիտի տեսնուի որ խաւարը լոյս չի կրնար տալ, տարակոյան ու կարծիքն ճշմարտութիւն չեն, շահն շատ

անգամ բարեւոյ հսկառակ եսասիրութեան ճարակն է։ Մարդուս միտքը կապ-
տուած . սիրտը երկրաքարչ, զգայնոտ մասը յղփացած, պիտի կազմեն
նոր մարդը անկրօնութեան դպրոցին մէջ՝ հրէշ մը։ Անոր համար առաքի-
նութիւն պիտի ըլլայ՝ ամէն կրից յագուրդ . իրաւունք՝ յափշտակութիւնը,
ճշմարիտ՝ ուղիւն ու իրեն հաճոյականն . բարի՝ շահաւորն։ — Այս է անկրօ-
նութեան ելքը, որ կը սպառնայ . պիտի յաջողի՞ լիովին . ո՛չ և յաւիտեան
ո՛չ։ Կ'անդրադառնամ եսիս վրայ անգամ մ'ալ և իմ վրայէն չափելով՝ հաս-
տատապէս համոզուած եմ՝ որ կայ մարդկութեան մէջ զգացում մը, որ կ'ա-
պրտամբի այս հոսանքին դէմ . այդ զգացումը՝ որքան մրափկոտ երեւի այ-
սօր, պիտի ցնցուի անշուշտ ուղիղ բանականութեան առաջնորդութեամբ,
որովհետեւ վերջապէս մարդս անասուն չէ։ Միւս կողմանէ այն նախախնամ
Տէրն՝ որ տիեզերքը կը պահէ իր կարգին ու ընթացքին մէջ, պիտի պահէ
անշուշտ մարդս ալ այն ուղղութեան մէջ, որով կարենայ հասնիլ առ ինքն,
որուն համար ստեղծած է։ Տիեզերքը՝ անբան է, ուստի ֆիզիքական օրի-
նաց բռնութեամբ կը մղէ . մարդո՞ր բանաւոր է և հարկ է զայն մղէ նոյն
խիստ ազատութեամբը, որ ըսիւ է բարոյական օրինաց քաղցրութեամբ, ու-
րոնց ամփոփումն է՝ կրօնի։

Կաթողիկէ Արձագանգս որուն ուղղեգիծը գլխաւորաբար կրօնական է,
իր առաջին թուով յարմարօրէն լսել կուտայ ընթերցողաց այս նուիրական
բառը, որուն նշանակութիւնը այնքան խորունկ է, որքան ծանօթ է գոր-
ծածութիւնը, և որքան հին ու նոր են անոր շուրջ դարձող կենսական հար-
ցերն ու դրութիւններն, այնքան հին ու նոր են մարդկային մտքի ու
սրտի պահանջներն։ Ուստի շահեկան է նիւթը, հա՛րկ է հետաքրքրուիլ
անով և զբաղիլ լրջօրէն։



Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ Առաջին Հովուական բողոքք։

— անոր պատեհութիւնը .

Երկգիւմութեանց, թիւրիմացութեան, երկմիտ յայտարարութեանց
ժամանակ չէ ա՛լ ևս . հարկ է ամէն հարց իրեն սկզբանց վերածել, որպէս
զի գիւրիներն անոնց լուծումն և որոշուի ըստ այնմ կուսակցողներու ընթաց-

քը: Մեր հասարակութեան մէջ ալ այս ձգձգումը, որ կար ատենէ մը ի վեր՝ վերջերս սկսած էր ալ աւելի վտանգաւոր կերպարանք մը առնուլ: Ոչ — կաթողիկէ սկզբունքներու խլրտացում մը, որոնք օգտուելով հոգեւոր իշխանութեան խոհեմ վերապահումէ կամ սիրաշահելով ուղղելու ընթացքէն՝ կը սպառնային գլուխ վերցնել անոր դէմ կաթողիկէ հաւատքի և հասարակութեան ինքնուրոյնութեան ծանր վտանգով: Խուճը մը այդ սկզբունքներու ծառայող անձանց կը փորձէ ազգային կամ ժողովրդական գերիշխանութիւնը քաղեցնել Եկեղեցւոյ վարչութեան մէջ, մեր հոգեւոր պետերն՝ Օսմանեան Տէրութեան թոյլատրած Աւագանւոյ ժողով մը նկատելով՝ ի սէր խաղաղութեան՝ այդ կերպարանքի վերածելու մտօք կ'արտօնեն, վասնզի այդ ձևով միայն օրինաւոր կրնար ըլլալ, միւս կողմանէ՝ ուղղելու յուսով աչք կը դրոյն անոնց մուրար քաջատրութեան, ծուռ դիտումներուն: Առաջ կ'երթայ խումբը՝ երեսփոխանական ժողովոյ մեծագորդ անուամբը՝ օրէնսդիր կը կանգնի ինքնիրեն և ազգային իրաւունքի անուամբ պահանջներ կ'ընէ՝ հակառակ նոյն իսկ կաթողիկէ Եկեղեցւոյ աստուածագիր իրաւունց: Հոգեւոր Պետերն՝ յուսալով միշտ Եկեղեցւոյ թոյլատրած և կառավարութենէ արտօնուած սահմաններու մէջ գնելու այս պահանջներն՝ կ'անտեսեն եղածը: Կը յառաջանայ խումբը՝ ազգային կանոնագրի պէտքն պատրուակ առնելով. Հոգեւոր Պետերն՝ չեն ուրանար այդպէտքն և կը խոստանան իսկ տալ զայն օր առաջ՝ բայց կանոնագիր ըսելով կ'ըմբռնեն հոգեւոր իշխանութենէ, միակ ձեռնհաս ժողովէ, այսինքն Սինդոսէ տրուելիք կանոնագիր մը, որ Եկեղեցական ու քաղաքական օրինաց համաձայն ըլլայ միանգամայն: Պահանջկոտ խումբը իր օրէնսդրութեան սկզբունքը քաղեցնելու համար կ'առաջարկէ ծրագիր մը, և երբ կը տեսնէ որ Հոգեւոր Պետերն՝ սրբազրելու յուսով նկատի կ'առնուն ծրագիրը, քայլ մը ևս կ'առնու և առանց կարեւորութիւն տալու անհրաժեշտ սրբազրութեանց՝ ու մանաւանդ ամբողջովին ընդունիլ և գործադրել տալու սպառնալիօք, հակառակ բողոքներու, հակառակ ազդարարութեանց կը մղէ գործն մինչև որ գլուխ հանէ: Այլ ևս դիտումնին երեսն ելած էր, հոգեւոր իշխանութիւնը չէր կրնար ա'լ ևս լռել. ճշմարիտ կաթողիկէներն իրաւունքն ունէին մեկին, որոշ, բացայայտ վճռի մը, որ փարատէր թիւրիմացութիւններն, զնէր խնդիրն իւր գծին վրայ և անոր վերջ մը տար: Ահա այս վճիռն է որ կ'արձկէ մեր Ամենապատիւ Հոգեւոր Տէրն իր առաջին Հովիւական Թղթով Հռովմէն, ուր եկած էր Եկեղեցւոյ Գերագոյն Պետն այցելելու:

Հաւատարիմ ճշմարիտ հովուի պաշտօնին և վստահ որ իր սիրելի

ուխտորներն զօտարի զնե՝ ո՛չ երթիցեն, իր թղթոյն սկիզբէն երևան կը հանէ թէ ինչպէս մեր ազգին մէջ վտանգուած է ծանրապէս կրօնքը և այդ սպառնական չարհուց ազդեցութիւնը կը տեսնուի նաև մեր կաթողիկէ հասարակութեան մէկ մասին վրայ, « այնպէս որ կրնանք մերձեցունել մեզ, կ'ըսէ, ինչ որ մեր Հարկ կը գրեին առ Թեոդոս կայսրն. զհասարակ « Ի Քրիստոս, ընկալեալ 'է Ս. Եղիսիոսապետին Հոգեւոր, լուսաւորեաց զհասարակ իողման... այժմ կ'ալն 'է յէնչ կ'ընէ հանել խառնուի « Երբեք » : Ասկից վերջ ցայսօր իր լուծեան պատճառներուն ակնարկելէ ետքը՝ վարդապետական կերպարանքի վերածելով խնդիրը, կը վերլուծէ անոր սկզբունքները և մէջտեղ կը գնէ պայծառ ու կորովի տեսութեամբ. Կաթողիկէ Եկեղեցւոյ աստուածաշէն կազմակերպութեան անյեղլի դրութիւնը պարզելով՝ կը ցուցնէ որ չի կրնար անոր վարչութեան մէջ ժողովրդական գերիշխանութիւն, տիրողութիւն թոյլ տրուիլ. և եթէ թոյլ տրուի այդ՝ մեր Եկեղեցւոյ մէջ՝ առ նախնի գործով կը դադրի կաթողիկէ Եկեղեցւոյ մէկ մաս ըլլալէ : Նոյնպէս յստակ ու հաւատարիմ հետեւողութեամբ Կաթողիկէ վարդապետութեան կը յայտարարէ որ Եկեղեցւոյ մէջ ազգային իրաւունք չէ հնար ենթադրել, որովհետև Կաթողիկէ Եկեղեցին ամէն ազգաց համար նոյն ըլլալով՝ չկայ հոն խտիր ազգի և ազգի մէջ : Եթէ կան արտօնութիւններ, ասոնք առանձնաշնորհումներ են և ո՛չ աւելի ինչ : Հետեւաբար եպիսկոպոսի ու կաթողիկոսի ընտրութեան մէջ ժողովուրդի ձայնը՝ ընտրողական չէ բնաւ, այլ միայն վկայական, որ ըսել կ'ուզէ թէ միջոց մ'է այդ վկայութիւնը Եկեղեցւոյ ձեռք՝ իր ընտրելիները ճանչնալու : Կը ցուցնէ որ հոգեւոր իշխանութիւնը միայն օրէնսդիր է Եկեղեցւոյ մէջ և ասոր Գերագոյն Ատեանն է Հռովմայ Ս. Փառհըն, որուն հաւատարիմ մնալով միայն կարելի է կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ մնալ : Կը մեկնէ անհերքելի ճշդութեամբ ազատութեան ճշմարիտ գաղափարը և անոր ուղիղ գործածութիւնը օրինաց սահմանին մէջ. կը վկայէ աներկեան հաստատութեամբ, որ Եկեղեցին ճշմարիտ ազատութենէ չի վախճնար, այլ մանաւանդ կ'օգտուի անկէ և պիտի օգտուի : Կը շեշտէ առանձին կարեւորութեամբ Կաթողիկէ Եկեղեցւոյ այն սկզբունքը՝ որով Ս. Կիւրիանոս կ'ըսէր. « Եթէ մեկը եպիսկոպոսին հեճ չէ, եկեղեցւոյ մեջ չէ » : Վասնորի մեր մէջ երկդիմութեան մէկ մեծ կէտն ալ այս եղած է, որ հաւատքի մասանց մէջ խտրութիւն կը գրուէր ծանօթ խումբի կողմանէ և այսպէս հաւատքի մաս նկատելով Երրորդութեան, Մարդեղութեան և այլն տեսական խորհուրդներն, Եկեղեցւոյ կազմակերպութեան, իշխանութեան, Եպիսկոպոսաց աստուածադիր պետութեան սկզբունքներն վէճի կ'ենթարկուէին

իրբե թէ հաւատքի խնդիր չըլլային և միւս խորհրդոց չափ պարաւանդիչ չըլլային Եկեղեցւոյ այս մասին տուած վճիռներն: Հոս ալ մեր արթուն Հովուապետը խնդիրն ու սկզբունքներն իրենց տեղն կը դնէ: Կը վերջացնէ իր թղթոյն առաջին մասը Պօղոս Առաքելոյն միշտ թարմ յորդորովն. « Մտիկ ըրէ՛ք ձեր առաջնորդներու և անոնց հպատակեցէ՛ք, որովհետեւ անոնք ձեր հոգւոյ համար կը տքնին՝ իրբե թէ հաշիւ պիտի տան ձեր տեղ, որպէսզի խնդութեամբ կատարեն իրենց պաշտօնը և ո՛չ սրտնեղութեամբ, քանզի այս ձեզ ալ օգտակար չէ » (Եբր. Ժգ. 17.): Որքա՞ն արդարացի պահանջ, որքա՞ն փրկաւէտ զեկոյց:

Այս վարդապետութենէն վերջ անոր անվիճելի սկզբանց հաւատարիմ մնալու գործնական որոշութեանց կ'իջնէ, և նախ ազգային ըստուած կանոնագրի վերջերս հրատարակուած ծրագիրը կը դատապարտէ ու անոր քննութիւնը կ'արգելու: — Երկրորդ՝ գաւառներու և թեմերու մէջ ալ՝ այդ դատապարտուած ծրագրի սկզբունքով և հոգւով ո՛ր և է ժողովրդական փորձ ու կարգադրութիւն կ'արգելու, և տեղեկութիւն կ'ուզէ հոն գտնուող ժողովներու վրայ, որպէս զի անոնց միակերպ կարգաւորում մը տայ: Ասով յայտնի է թէ իր միտքն է ջնջել միայն՝ ապօրինի ժողովներն և ուղիղ կազմակերպութիւն տալ օրինաւոր ժողովներու: — Միշտ միեւնոյն ուղղութեամբ կ'արգելու՝ երրորդ՝ մեր մէջ թոյլ տուեալ ժողովներու Ատենապետութիւնը աշխարհականի ձեռք չձգել և ժողովներու խորհրդարանի ձեռք տալ, երեսն հանելով անդիմադրելի խորհրդածութիւններով այն ծանր և տխուր անպատահութիւններն, որոնք անարգանք են եղած կաթողիկէ անուան:

Այս կարգադրութիւններէն վերջ քանի մը սխալ ու նենգաւոր զբոյցներու առջեւ կ'առնու յայտարարելով՝ ա. որ ինքն կանոնագրի հակառակ չէ և կը խոստանայ մանաւանդ տալ կանոնագիր մը ըստ կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբանց: Բ. Սխալ է թէ 1888ի միութիւնը, որով մեր մէջ տեղի ունեցած ցաւալի հերձուածին վերջ տրուեցաւ, զլուխ ելած ըլլայ պայմանաւ որ Եկեղեցւոյ կողմանէ ընդունուած ըլլային այն հերձուածի մոլար սկզբունքներն: Եկեղեցին ինչպէս այն ատեն, նոյնպէս այսօր կը մերժէ, կը հերքէ ու կը դատապարտէ այն սկզբունքներն և պիտի դատապարտէ ցկատարած աշխարհի:

Այս ծանր հերքումներէ ետքը՝ կը յաւելու առաքելական համարձակութեամբ մեր արդարակորով Հայրապետն. « Արդ հոս յայտնապէս երեսան կուգայ որ խնդիրն սկզբանց և հաւատքի վրայ կը ծանրանայ, ու

րուն առջև կարելի չէ վարանիլ, եթէ կ'ուզենք հաւատարմութեամբ վարել մեր հովուական պաշտօնը ։ և մենք կ'աւելցնենք ինչ որ ուրիշ տեղ ակնարկած է մեր Հայրապետն ։ « որուն առջև կարելի չէ վարանիլ, եթէ կ'ուզենք ճշմարտապէս կաթողիկեայ մնալ ։ Ուստի գիտնայ մեր ժողովուրդը, որ խնդիրը իր վերջին հանգուցին հասած է . ազգային իրաւունքի անուամբ Եկեղեցւոյ իշխանութեան դէմ գլուխ վերցնող խմբակը կուզէ կաթողիկէի անունը պահել սկզբունքներն ոտնակոխել, մեր Հայրապետն կը պահանջէ որ կաթողիկէի անունն ունեցողն պարտաւոր է սկզբունքներն ալ յարգելու և անոր լիովին համակերպելու : Հետեւաբար երկու տերանց մէջ կազալու ժամ չէ . հարկ է կամ գաւանիլ այս կոնգակի սկզբունքներն և հպատակիլ անոր կարգադրութեանց, կամ մերժելով զանոնք կաթողիկէ եկեղեցւոյ միութենէն ալ բաժնուելու վտանգի մէջ դնել անձը : Երկմտելու տեղ չկայ . նկարագրի, սկզբունքի տէր մարդը՝ ընկերքը կ'որոշէ : Բոլոր վստահութիւնը ունինք որ մեր ժողովրդեան մէջ կաթողիկէ սկզբունքը պիտի յաղթանակէ, բայց որովհետեւ թշնամի մարդիկ սխալ լուրերով, վրդովիչ աղմկով կրնան բարեհաւատներն ալ շփոթել, մեր Հոգեւոր Պետը կըզգուշացնէ իր ժողովուրդը մանաւանդ Պուսոյ լրագիրներէ, որոնք բնաւ ուղիղ լրագրութեան պաշտօնի բարձր գիտակցութիւնը չունին և սուտ, նախատինք, անպատկառ յարձակումներն օրինաւոր կը համարին :

Այս ամենուն դէմ արմատական դարման ըլլալով կաթողիկէ վարդապետութեան ուսմունքը, կը յորդորէ մեր եռանդուն կաթողիկեան Քրիստոսի թուղթ ըլլալ ուսողութեամբ հաւատքի ճշմարտութեանց : Եւ այս մասին ալ գործնական հրահանգներ կը սահմանէ :

Հաւատքի միութեան և զայն անարատ պահելու սկզբունքէն յռիթմ կ'առնու յետոյ կրօնական անխտրութեան եւ անհարբեռութեան մոլոր դրութեանց դէմ խօսելու, որոնք վերջերս այնքան անտեղի վէճերու, կաթողիկէ եկեղեցւոյ դէմ ամբաստանութեան և իր անձին ալ դէմ անկարգ զրոյցներու տեղիք տուին ի հոգեւորս հաղորդակցութեան արգելքի մը ստիժ : Ասկից վերջ կը մասնաւորէ խրատը կղերական դասուն, որուն կը յիշեցնէ ներքին կեանքի կարեւորութիւնը մանաւանդ II . Քահանայապետի Պիոսի Ժ . ի յորդորական խօսքերովն :

Դարձեալ կղերանոցներու ալ կ'ուղղէ պատշաճ խրատներ . և մասնաւոր օծութեամբ մը խօսքը դարձնելով Մայրապետներու, Սրբոց Հռիփսիմեանց շարականէն քաղուած սքանչելի գաղափարներով կուսութեան դրուատիքն կ'ընէ և կը հռչակէ անոր բարերար գործն եկեղեցւոյ մէջ,

եթէ անոր հետեւող « Անճիմի ընտրեալ » պահեն Եկեղեցւոյ սահմանած իմաստուն կարգադրութիւնն :

Կր փակէ այս հեղինակաւոր հովուական թուղթը հրաւիրելով ամբողջ կաթողիկէ Հասարակութիւնը յոտս իր Գերագոյն Հովուապետին, որուն օրհնութիւնը կը հաղորդէ ի կնիք իր խօսքին :

Չէր կրնար պատահագոյն ճշտութեամբ ու աւելի որոշ յստակութեամբ աւանդուիլ մեր Եկեղեցւոյ վարդապետութիւնը այն կէտերու մասին՝ որոնք այնքան շփոթութեանց տեղիք տուած են և կը շարունակեն տալ : Ուստի մինչդեռ շնորհակալութիւնն իսկ կը յայտնենք մեր արժանաւոր Հայրապետին, կը խնդրենք մեր հասարակութեան ամէն անհատէ՝ որ ուշադրութեամբ, առանց նախապաշարումի կարգայ այս հովուական թուղթը : Վըստահ ենք որ լաւ ընթերցումը բաւական պիտի ըլլայ ճշմարիտ կաթողիկէից՝ համակերպելու համար լիովին անոր կարգադրութեանց, որոնք մեր փերկութիւնը պիտի ըլլան :

Ճշմարտապէս կաթողիկէայ անձ մը իր Հովուին չի կրնար անսաստել :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս . ԱԻԵՏԱՐԱՆԻ (1)

Վերջին Աւետարան Յինանց . — Յովի . ԻԱ :

Քրիստոսի Տեսոն մերոյ յարութենէն վերջը՝ երբ նա արդէն մի քանի անգամ ինքըզինքն յայտնած էր իւր աշակերտներուն, օր մը Պետրոս Առաքեալ որոշեց երթալ ձուկ որսալու, խնամակալ հօր մը պէս կերակուր հայթայթելու համար իւր առաքելական գնդին, որուն ինքն առջնորդն էր խոհական ու անխոնջ . և ըսաւ . « Կ'երթաւ ձուկ որսալու . » — « Մննք ալ կուգանք իւր հետ » , կրկնեցին իսկոյն իր քով գտնուող միւս վեց Առաքեալներն ալ . այսպէս պատրաստակամ կապուած էին իրենց Գլխոյն հետ : Ամբողջ գիշերը ոչինչ կրցան որսալ : Առուօտեան զէմ, նորածագ արշալոյսին .

(1) Մտադիր ենք, եթէ հնար ըլլայ, Արձագանգիս իւրաքանչիւր թիւին մէջ տալ Սուրբ Աւետարանին գրաւոր ու բարոյական կարճ մեկնութիւն մը, ի դիւրութիւն Ժողովրդոց և ի շինութիւն հաւատացելոց : Պիտի սկսինք Մատթէոսի Սուրբ Աւետարանէն Բայց առաջին թըւոյն համար պատշաճ դատուեցաւ Յինանց վերջին Աւետարանը քիչ մը երկայն մեկնել, Առաքելոց և Ս . Գրիգոր Լուսաւորչի տօներուն և թերթիս ի Հոռոմ հրատարակութեան գուղադիպութեամբ :

ծովափունքի վրայ երեցաւ Յիսուս, ծագիկ յարութեան՝ դեռաբայս ի գե-
րեզմանէ. և չճանչցան զինքը: Կ'ուզէր նա որ սքանչելեօք ճանչնային:
Կերակուր խնդրեց անոնցմէ. և ամենագէտն երբ լսեց թէ ի զուր աշխա-
տեր էին ամբողջ գիշերը, հրաման ըրաւ նետել ուռկանը նաւին աջակող-
մը, — նշան ուղիղ խորհելու և յաջողութեան. — և հազիւ թէ նետեցին,
ահա լեցուեցաւ ուռկանը, և չէին կրնար քարշել ձուկերուն բազմութեան
պատճառաւ: Այսպէս՝ Քրիստոսի ուղղափառ վարդապետութեամբն, մար-
գիկները պիտի սրտային ի կեանս: — Յովհաննէս աշակերտն սիրոյ, ան-
մեղ և կոյս, անմիջապէս ճանչցաւ զՅիսուս. յարութեան անմահ արեւը
ցոլաց սիրոյ աչքերուն: Իսկ Պետրոս՝ երբ լսեց թէ Տէրն է, Պետրոս անզուսպ
անձնանուէրն, ծով նետուեցաւ Յիսուսի երթալու համար. ա՛յնքան կ'աճա-
պարէր: Իսկ մեկախոնք նաւով եկան: Ու երբ ելան տեսան որ արգէն հոն
կրակի վրայ դրուած ձկնիւր կային և հաց, հրաշալեօք « Կերակրողին տէրե-
րաց »: Բայց նա ուզեց անոնց բռնած ձկներէն, հարիւր յիսուն երեք մե-
ծամեծ ձկներէն, որոնցմէ չպատուեցաւ նաեւ զործիքն՝ սքանչելեօք: Յիսուս
կանչեց զանոնք ճաշելու. և չէին համարձակիր հարցնելու թէ դու ո՞վ ես.
քանզի ամենքը ներքին համոզողական զգացումով գիտէին թէ Յիսուսն է:
Եւ Յիսուս՝ հայրն գթած, որ իր աշակերտաց ձեռքով բաշխել տուած էր
բիւրաւոր մարգոց կերակուր հրաշալի, հոս իւր աշակերտաց ինքն իր ձեռ-
քով տուաւ կերակուր. եւ հազիւ թէ ճաշը լմեցաւ, յանկարծ դարձաւ Յի-
սուս առ Պետրոս և ըսաւ. « Սիմո՛վն, որդի՛ Յովհաննէս, կը սիրե՞ս զիս
ասոնցմէ աւելի »: Պատասխանեց Պետրոս « Այո՛, Տէր. դու ալ գիտես որ
կը սիրեմ զքեզ »: Յիսուս կրկնեց. Արածէ՛ իմ գառնուկներս »: — Եւ-
կրորդ անգամ նոյն հարցում և նոյն պատասխան. և Յիսուս ըսաւ. « Ա-
րածէ՛ իմ ոչխարներս »: Երրորդ անգամ դարձեալ նոյն բանն հարցուց Յի-
սուս. և ահա զՊետրոս տրամութիւն մը պատեց՝ երեք հարցումներուն
ակնարկութեան համար. յիշեց իր երեք ուրացութիւնները որոնց համար
դառնապէս լացած էր: Եւ ահա ինքն ստիպուեցաւ շեշտել իր պատասխանը
և ըսաւ. « Ո՛վ Տէր. դու ամէն բան գիտես, և դու իսկ ամեն բան կը
ճանչնաս. և նաեւ թէ կը սիրեմ զքեզ »: Սիրաւատ բայց խոցողաւ սրտի
մը հուսկ հառաչն էր: Երեքնեցաւ հրամանն ու վարձքը. « Արածե՛ իմ ոչ-
խարներս »: Եւ անմիջապէս պատմեց Յիսուս՝ Պետրոսի յաղթապանծ վկա-
յութիւնը, որով զԱստուած պիտի փառաւորէր. « Յառաջ գողալկերով մե-
հուն խոյոյ լինել կցորդ արեւաթի խայիկ » (Երկ. Մհկ.): Եւ բաժնեց զին-
քը միւս աշակերտներէն և հետն առաւ ու գնաց՝ ըսելով. « Ե՛կ զինք իմ »:

Քրիստոսի Տեառն մերոյ այս երևումը իւր հաստատած Եկեղեցւոյն համար ամենակարեւոր էր. իր խոստումներն կը կատարեր, իր աստուածային Շէնքը կը կատարելագործէր, հանգիստւորապէս հաստատելով զՊետրոս գերագոյն Հովիւ տեսանելի: Եւ ինչպէս Եկեղեցւոյ հիմը Պետրոսի վրայ դրած էր՝ Հաւատոյ խոստովանութեամբ, այսպէս Հովուութեան պաշտօնը հաստատեց անոր Սիրոյն վրայ. զի « Սէրն է զոգ կասարեան » և « Լրումն օրինաց »: Եկեղեցւոյ հիմն ու կատարումը Պետրոսի վրայ է: Եւ երբ այս մեծ Գործը կատարեց Յիսուս, թողուց միւս աշակերտները, և Պետրոսը միայն առաւ ու գնաց. զի յաւիտեանս իւր Փոխանորդն ու ներկայացուցիչն է Պետրոս: Ուրեմն Յիսուսի այս խօսակցութեան մէջ կայ ՊԱՇՏԱՄԱՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ճշմարիտ տուեցութիւն: Քանզի հովիւ կարգեց զՊետրոս՝ «. իր գառնուկներուն՝ այս է հաւատացելոց, և իր ոչխարներուն՝ այս է եկեղեցականաց և միւս հովուաց վրայ ևս, առանց բացառութեան, ինչպէս կ'ուսուցանեն ամէն Հարք և վարդապետք. — ք. որպէսզի արածե՞ զանոնք, բանիւ ճշմարտութեան, յարօտս անսխալ վարդապետութեան. — ք. որպէս զի ի միութեան պահպանէ հօտը, քանզի առանց հովուի՝ « Պիտի ցրուին ոչխարներն » (Ջաք. ԺԳ. 7.): Մինչդեռ ինք խոստացաւ որ՝ « Պիտի ըլլան մեկ հօս եւ մեկ հովիւ » — ք. Որպէս զի պահպանէ ոչխարները գիշարանձ գայլերէ: Եւ որովհետեւ խօսքը բանական ոչխարներու վրայ է, Պետրոսի տրուած այս իշխանութիւնը ճշմարիտ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ է. ուստի արածել կը նշանակէ Վերակացու լինել (Համեմատ. Ա. Պետր. Ե. 2.). այսինքն Ուսուցանել, Ուղղել, Կառավարել. « Ի ԲԵՆ ԵԼՑԷ ԻՅ ԻՆԷՆ, յի հովուեացի ԴԷԴԷԼԷՐԴ ԻՅ ԴԷՐԵԼ » (Մատթ. Բ. 6): Եւ Քրիստոս ինքն է Քաջ Հովիւ ու Դիտապետ: « Ինչ կայ ուրմն զարմանալու եթէ Պետրոս ուրացութեան այս մեղքէն վերջը Հովիւ կարգուեցաւ Եկեղեցւոյ, ինչպէս Մովսէս զԵփրայիմացիս սպաննելէ վերջը Վարիչ կարգուեցաւ Իսրայէլի ժողովրդեան » (Ս. Օգոստ.):

Եւ Պետրոսի տրուած Հովուապետութեան այս իշխանութիւնը՝ 1. յոյժ ընդարձակ է, ու կը տարածուի առեւտրական գառնուկներու և առեւտրական ոչխարներու վրայ. չկրնար ըլլալ և ոչ մի որ ճշմարիտ Եկեղեցւոյ պատկանի և անոր հովուութեան չենթարկուի. « Դու ես վէմ, և այս վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս » ընդհանուր (Մատթ. ԺԶ. 18.): — 2. Լիակատար է այս իշխանութիւնը. զի այս մեծ հօտը պիտի հովուէ ու արածէ, ինչպէս ինքն Քրիստոս, ամէն կատարելութեամբ, ամենուրեք ու միշտ. և այս իշխանութիւնը կը տարածուի նաեւ իւր Առաքելակցաց վրայ, եկեղեցւոյ

« և է միւս իշխանաւորներուն վրայ, որմէն եկեղեցեաց վրայ, ուղղակի և անմիջնորդական իրաւաբանութեամբ. Գանգի անոնք ալ Բրիտտոսի ոչ-խարներն են. և ինչպէս Բրիտտոս իր խկ ձեռքովը տուաւ անոնց կերակուրը, Պետրոս որ միւսակ « ձգէր զգործին » զուռկանն հրաշալի ձկնե-րու, մինչդեռ նախապէս ամէնքը մէկէն « Ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն » ինք պիտի ջամբէ անոնց զամենայն « Բոսն որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ » (Մատթ. Գ. 4.) և կեանք կուտայ: Դարձեալ և՛ Առաքեալք և՛ իշխանք եկեղեցւոյ անդամք են միոյ մարմնոյ եկեղեցւոյ որոյ տեսանելի Գլուխն է Պետրոս. « Որ գերագոյն ընտրելոյց Առաքելոցն դասուց անուանեցեր լինել զերանելին զՊետրոս, գլուխ սուրբ Հաւատոյ, հիմն եկեղեցւոյ ». « Գլխոյն ընտրեալ հօտին փոքու ». « Աշակերտաց գե-րագունին, սուրբ Հաւատոյ անշարժ վիմին » (Շրկ.): Բնաւ չպիտի պակսի անոր հաւատքը. և նա պիտի հաստատէ իր թոյր եղբայրները » (Ղուկ. ԻԲ. 32.): Ահա՛ ինչու համար յարուցեալն Բրիտտոս երկինք համբառնալէն յառաջ միւս առաքելոց սուջն միայն Պետրոսի սեղգելով իր խօսքը հան-դիսաւորապէս երեքնեց իւր հրամանն. « Արածեա՛ »: Ո՛վ որ Բրիտտոսի կը պատկանի, Պետրոսի ոչխարն է, առանց ո՛ր և է բացառութեան, ամենուրեք, և ցվերջ ժամանակաց. « Ուր Պետրոս, անդ եկեղեցի » (Ս. Ամբրոսիոս):

Ուրեմն մի և նոյն ընդարձակ ու լիակատար Հոփուութեան անմիջ-նորդական իշխանութիւնը Բրիտտոսի անմիազ եկեղեցւոյն վրայ յաստուա-ծային իրաւանց ունի Պետրոսի օրինաւոր Յաջորդն՝ Սրբազան Փահանա-յապետն Հռովմայ, « Վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց » (Ս. Գր. Լուս.) — Դո՛ւ ես, ըսաւ Ս. Բեռնարդոս, ում յանձնուեցան բանալիներն, ում հաւատացան ոչխարքն: Կան այո՛ր և ուրիշ բացողք արքայութեան և հովիւք հօտերու. բայց դու այնչափ առաւել փառաւորապէս՝ որչափ և այլազգ երկու անունն ալ ուրիշներէն գեր ի վերոյ ժառանգեցիր: Ունին անոնք իրենց յանձնուած հօտերը, իւրաքանչիւրն առանձինն մասնաւոր-եալ. քեզ ամբողջը հաւատացաւ՝ միոյդ մին: Եւ ո՛չ միայն ոչխարաց, այլ և ամէն հոփուաց ևս՝ դու ես հովիւ. քանզի ըսաւ. « Արածեա՛ զոչխարս իմ »: զո՞րս. այս կամ այն քաղաքի՞ կամ երկրի՞ մասնաւոր կամ թագաւորու-թեան՞ ժողովուրդները. « Ոչխարս իմ » ըսաւ. յայտ է թէ չմասնաւորեց, այլ ամենը նշանակեց « (առ Եւգ. Գ.) » — Փասն դարերէ ի վեր գեւ այ-սօր յանձին Պիտի Ժ. Ի և Խօսի Պետրոս » (Քաղկէ. Ժողգ.): Եւ մերո Շնորհալի կը բացագոնէ:

Եւ դո՛ւ՝ Հո՛ո՛մ մայր քաղաքաց,

Գերապայծառ և պատուելի .

Մեծին Աթոռըդ Պետրոսի՝

Առաքելոց Գլխաւորի .

Եկեղեցիդ անշարժելի ,

Ի Կեփայեան շինեալ վիմի .

Դրանց զժոխոց անյաղթելի .

Եւ կնիք երկնիցըդ Բացողի » (Ողբ . Եղեա .) :

Եւ ժողովն Սոյ ռնի . « Ի Նիկիական Ս . ժողովն գումարեալ Ս . Հարքն վճռեցին թէ Եկեղեցին Հռովմայ գլուխ է այլոց Եկեղեցեաց , որոյ գլուխ է Պապն : Նմին իրի Կաթողիկոսունք Հայոց և այլ Պատրիարքունք են ի ներքոյ իշխանութեան Նորա » : Այս պատճառաւ և գերահռչակն Բենեդ . ԺԳ . մեր Աբրահամ Պետրոս Ա . Կաթողիկոսն հաստատելու համար խօսած Ատենախօսութեանը մէջ կ'ըսէ » . Ս . Գրիգոր , որ Լուռաւորիչ կը կոչուի , Հայոց Տրդատ թագաւորը հաւատքի դարձնելէն վերջը , անոր հետ մեկտեղ Հռոմ եկաւ . և հոս՝ Ս . Սեղբստրոս Քահանայապետին ու Յիսուսի Քրիստոսի Փոխանորդին ու Քրիստոնէութեան ընդհանուր Հովուին յարգութիւն և հնազանդութիւն ընծայեց . և անկէ ընդունեցաւ Հայոց վրայ Պատրիարքութիւնն ու Գահերեցութիւնը :

* *

Աւետարանի սոյն գեղեցիկ կտորէն քառյակիան մաս պէտք է հանենք ի շինութիւն մեր : 1 . Անգգամ է ով որ կը հերձէ զԵկեղեցին Քրիստոսի . ո՛վ որ չհնազանդիր Գլխոյն Եկեղեցւոյ . ո՛վ որ կը գայթակղեցնէ կը մոլորեցնէ գառնուկներէն ոչխարներէն մէկը : « Ելան , կ'ըսէ Ս . Օգոստինոս , ոմանք անհուատարիմ ծառայք , որոնք Քրիստոսի հօտը բաժնեցին , ու գողութեամբ իրենց անձանց ստացուած ըրին . և ահա կ'ըսեն . Անոնք իմ ոչխարներս են . գու ի՞նչ կը խառնուիս իմ ոչխարներու . . . և ահա Յիսուս կորսնցուց իր ոչխարները : — Դո՛ւ , կ'ըսեն , արածէ՛ քու գառնուկներդ , քու ոչխարներդ : — Բայց Քրիստոս Պետրոսի չըսաւ . Արածէ՛ քու գառնուկներդ , քու ոչխարներդ . այլ՝ Արածէ՛ իմ գառնուկներս , իմ ոչխարներս » :

2 . Ըլլա՛ն հաւատացեալք իրենց Հովիւներուն , ըլլա՛ն նաև Հովիւք ու ամենայն Եկեղեցիք , Քրիստոսի հրամանին համաձայն կը պարտին կատարեալ հնազանդութիւն առ Գերագոյն տեսանելի Հովուապետն Սրբ .

Քահանայապետն Հռովմայ. հպատակութիւն անսահմանափակ, անկեղծ, որդիական, ինչպէս Պետրոսի, ինչպէս Քրիստոսի իսկ. քանզի անոր է արածելու իշխանութիւն. « Ունիդէք վրաս առաջնորդաց յերոց և հպապի կացէ՛նոցա » (Եբր. ԺԳ. 17):

3. Ինքնագլուխ չերթալ օտարոտի արօտներու, ուր փուշեր կան և տատասկք, և մերթ ևս թունալից մահառիթ խոտեր. մնալ միշտ ճշմարիտ քաջ, օրինաւոր Հովիւին հետ, յուզղափառ դաւանութեան. քանզի կրնան նաև զմեզ գիշատել « Յափշտակող գալլեր, որոնք չպիտի խնային հօտին. . և ձեր մէջէն ալ պիտի ելլեն մարդիկ որ պիտի խօսին սխալներ, որպէս զի աշակերտները իրենց հտեւէն տանին » (Գործ. Ի. 29 — 30):

4. Հովիւներն ալ պէտք է ըլլան քաջարթուն, նմանելով Սրբոյն Պետրոսի, խելով մոլախինտն ու որովմը՝ իրենց արօտավայրերէն. անխնայ հալածելով գալլերը. ուսուցանելով միշտ և ի մի պահելով իրենց ոչխարները. որոնց համար պիտի դնեն մինչև իսկ իրենց կեանքը:

5. Վերջապէս հաւատացեալք և հովիւք պէտք է նմանին Պետրոսի, որ Քրիստոսի չարչարակցութեան խոստում առաւ իբրև վարձ. ու մահուամբը փառաւորեց զԱստուած: « Զեռքերդ վեր պիտի բռնես. և ուրիշներ պիտի կապեն գօտիդ ». Ի Հոռոմ, ուր իմ իշխանական Եկեղեցւոյս հիմը և անսասանելի Աթոռը պիտի դնես Կայսերաց ապարանից փրօտակներուն վրայ, յաւիտենական. ուր տիեզերաց վրայ փառայեղ պիտի իշխէ իմ Նշանս՝ քաւ անուանակից հրաշալի Տաճարին երկնասլաց գմբեթին վրայէն՝ առ երի Յաջորդացդ Սրբավայրին, Ի Հոռոմ՝ զքեզ ալ պիտի պրկեն ի խաչ և պիտի նահատակուիս. « Դու ե՛կ զկնի իմ », դու՝ որ չէիր կրնար իմանալ, երբ Փականաց իշխանութեան խոստումն քեզի ընելէ վերջը, իմ չարչարանաց, նախատունաց ու մահուան խօսքերը կը յարէի. և քնութիւնըդ սարսեղով ընդվզելով՝ կ'ըսէիր. « Քա՛ւլիցի քեզ՝ Տէ՛ր, մի՛ եղիցի քեզ այդ », և կը յանդիմանուէիր (Մատ. ԺԶ. 19-23): — Սորվինք ուրեմն, եղբարք, Պետրոս Առաքեալէն որ՝ « Նոյն անցք չարչարանաց պահուած կայ նաև մեզի համար այս աշխարհիս վրայ. Յիսուս Քրիստոս, որուն փոքր ինչ չարչարակից եղանք, նա՛ պիտի կազդուրէ, պիտի կարողացնէ » (Ա. Պետր. Ե. 9-10). և թէ՛ « Եթէ անոր հետ մեռնինք, անոր հետ նաև պիտի կենդանանանք. եթէ համբերենք, անոր հետ նաև պիտի թափաւորենք. » (Բ. Տիմ. Բ. 11):



ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՀՌՈՄ

Սրբ. Քահանայապետն իր կողմանէ մասնաւոր պատուիրակութիւն մը ղրկեց յԱնգղիա՝ Գէորգ Ե. Թագաւորին Թագադրութեան հանգէսին համար: Արքայի կարգի մասնաւոր Պատգամաւորն է Արհի. Կրանիթօ տի Պէլմօնթէ, Արք. ազնուատունի և համակրելի, նախկին Քահանայապետին Նուիրակ Աւատրիոյ — Հունգարիոյ: Բազմաթիւ էին իւր հետևորդք, բարձրաստիճան եկեղեցականք և ազնուազարմ աշխարհականք:

— Թագադրութեան Ուրբաթ աւուր պահքը Սրբ. Քահանայապետը տնօրինած էր Անգղիոյ համար:

Սպանիոյ Թագաւոր Ալֆօնս ԺԳ. իւր արքայական պալատան մէջ հիւրընկալեց Վսեմ. Միլանաւորն Կարսիա՝ Արք. Թօլէտօյի և Պատր. Արեւելեան Հնդկաց, զոր Սրբ. Քինյայ. իւր իւր Պատուիրակ որոշած էր նախագահելու Ս. Հաղորդութեան Համաժողովին:

Մատրիտի ազնուական գերդաստաններն ալ յատկապէս պատրաստութիւններ տեսած էին օթեկանելու համար այն օտար աւագ եկեղեցականները որոնք իրենց այցելութեամբ պիտի պատուեն զՍպանիա — ինչպէս կ'ըսէր պաշտօնական Յայտագիրը — առթիւ Ս. Հաղորդութեան Համաժողովին: Երկաթուղեաց ընկերութիւնք ալ մեծամեծ զեղջեր կատարեցին այս առթիւ: Կարգադիր Մասնախումբին կը նախագահէր Նորին Բարձրապատուութիւն՝ Ինֆանթա Իզապէլլա:

Համաժողովին հրաւիրուած ըլլալով մեր Ամենայ. Կ. Պատրիարքն ալ, իւր ներկայութեան մանրամասնութիւնները ուրիշ թուով մը պիտի հրատարակենք:

Յունիս 12 ին առաւօտ արտաշարժ ծիսակատարութիւն մը տեղի ունեցաւ ի Վատիկան, Պաւլոսեան Մատրան մէջ, ընտիր բազմութեան մը առջև: Սրբ. Քահանայապետին արտաքին գործոց Պաշտօնեայ՝ Միլանաւոր Մէրի տէլ Վալ՝ Կիսասարկաւագ ձեռնադրեց վեց Անգղիացիներ, որոնք

նախապէս բողոքական անկլիքսն եկեղեցւոյ Պատուելիներ իզած էին, և ժամանակէ մ'ի վեր Կաթողիկէ Կրօնքն ընդունած ըլլալով, կը բնակէին ի Հռոմ՝ Ազնուական եկեղեցականաց Կաճառին մէջ, ուր կը կատարեն սատուածաբանական ուսմունքը: Արարողութեան պահուն ներկայք խորապէս յուզուեցան՝ մինչև յարտասուս:—Յետ ձեռնադրութեան՝ Կարդինալը ներկայացուց ընծայեալներն առ Սրբ. Քհնյալ. որ հայրական սիրով ընդունելով, պահ մը խօսակցեցաւ անոնց հետ:

Մաղաքիա Օրմանեան նախկին Պօրք. ի *l'Eglise Arménienne* անուանեալ մէկ գիրքը՝ ի Հռոմ արգելեալ գրոց ցանկը դասուեցաւ, պատճառներն ի մօտոյ պիտի խորհրդածենք:

* *

Մեր Եպիսկոպոսաց մէկէն կ'ընդունինք նամակ մը նոր Մրապրի նըկատմամբ, որմէ կ'արտատպենք հետեւեալ կտորը՝ ցոյց տալու համար որ Նուիրապետութիւնն ալ Ամենապ. Հոգեւոր Տեառն համամիտ ու ձայնակից է. « Հրամանաւ Սրբ. Քահանայապետին՝ Գերերջ. Հոգեւոր Տիրոջ՝ ազգ. Երեսփոխանական Ժողովը ջնջած ըլլալը իմացայ. այս բանը կ'երեւի բաւական աղմուկ հանած է ի Պօլիս նոյն ժողովոյ անդամներուն մէջ. նաեւ էջմիածնականները՝ ըստ սովորութեան, փոխանակ իրենք զիրենք մտածելու, սկսած են դարձեալ մեր խնդիրներով զբաղիլ: Սաոյգ է որ մեր Մեծ. Երեսփոխաններուն տրուած սա հարուածը բաւական ծանր է. բայց իրենց յանդգնութեան արժանաւոր հարուած մըն է. յուսանք թէ ասով զգաստանան, և իւրաքանչիւր իր աստիճանը ճանչնայ. եթէ չուզին զգաստանալ, գոնէ բարի ժողովուրդը ազատուած կ'ըլլայ իրենց թունաւոր ազդեցութիւնէն: ... Ասոնք բաւական ժամանակէ ի վեր եկեղեցական թոյլ վարչութեան մը անաեղի մանաւանդ վտանգաւոր զիջողութիւններէն չփախած, իրենց տրուած ներկայ փրկաւէտ հարուածը շատ ծանր՝ նոյն իսկ անխոհեմութեան արդիւնք կը համարեն. մինչդեռ կը յուսանք որ այսպիսի հարուած մը միայն պիտի կարենայ ազատել մեր խեղճ Հասարակութիւնը մօտալուտ կորստեան վտանգէն »:

Համազօր իմաստով կը գրեն նաեւ միւս Եպիսկոպոսներ: Նոյնպէս գաւառներէն կ'ընդունինք բացարձակ բողոքներ Պօլսոյ ապօրինութեանց դէմ զատնք ալ հետզհետէ պիտի հրատարակենք, որչափ պիտի ներէ թերթիս անձուկ միջոցը:

Մեծնուայի Ախպար թերթը դառնապէս կը գանգատի որ Կ. Պատրիարքը իրեն նիւթական շնտա կը պատճառէ՝ թերթին ընթերցումն արգիւիւրդ։ Իսկ ինքն Կաթողիկոսին դէմ սկսաւ բացայայտ մաքառիլ և հոգեւոր իշխանութեան դէմ եղած հակառակութիւնները պաշտպանել։ Բնականաբար Կաթողիկոսը չէր կրնար ճանչնալ զայն իբր Կաթողիկեայ անկեղծ թերթ մը՝ գրեթէ կէս պաշտօնական. որ տիտղոսիւ այն աւելի մեծ շնտա կը հասցնէր Կաթողիկէ ընթերցողաց քան այլադասան թերթերու չարամիտ հրատարակութիւնը։

Մեծնուա այնքան շեշտեց իր հակառակասէր ոգին, որ՝ զինքն անկողմնակալ դաւանելով հանդերձ և սակայն անկողմնակալութեան ինչ ըլլալը պարտկելով ու նենգելով, իր 4878 թիւին մէջ մերժեց հրատարակել գաւառէն իրեն եկած գրութիւն մը որ կը պաշտպանէր Ամենայ. Թէրզեան Կ. Պատրիարքի տրամադրութիւնները. և մինչդեռ ելեւել կ'ընէր հակառակ և լիւր յօդուածներն ու հեռագիրներն հրատարակելու, կը յայտարարէր որ ի պաշտպանութիւն եկած գրութիւնները բացարձակապէս չպիտի հրատարակէ, և այդ... ի սէր ազգին։

Միւս կողմանէ գիտենք որ գաւառներէն եկած և իր հրատարակած բողոքները որքան աննշան են և ինչ ոգւոյ և տրամադրութեանց ծառայող անձինքներէ կուգան որոնք բնականաբար չեն կրնար տեղւոյն համոզմանց ներկայացուցիչ համարուիլ։

Իբրեւ յոյժ ուշագրաւ և դիտելի՝ աստէն կը կցենք հետեւալ տողերն, զորս կը քաղենք Ամերիկայի Հայ Էջմօ.ի նամակագրութենէ մը՝ իրենց գործոց նկատմամբ, հրատարակեալ Թիւզանդիոնի մէջ. կարծես մերոնց — Կաթողիկեայց — վիճակն է որ կը նկարէ. « Խաւարասէրները լոյսէն կը խրտչին։ Մարդիկը չեն ուզեր գլուխ մ'ըլլայ։ Եւ եթէ ունենայու ալ ըլլան, պէտք է որ անիկայ ոտքերու հնազանդող գլուխ մ'ըլլայ։ Ինչ որ ցաւալի է, սա է թէ՝ ուրիշներ ալ միամտաբար այս հոսանքէն կը տարուին, և այլք՝ գիտակցաբար, հաճելի երեւալու համար։ Հոս տեղը չէ՞ ըսել թէ՝ մենք « մեծութեան սպանիչներ ենք »։

Նոյն ՄէծՄՈՒԱ իր թշնամութիւնը Կ. Պատրիարքին հոգեւոր իշխանութեան դէմ կը դարձնէ բացայայտութենէ՝ իր 4880 թիւին մէջ, Կաթողիկոսին Հռոմէն ղրկած Կոնդակին դէմ այնպիսի գռհհիկ բացատրութեամբ մը, որ ո՛չ միայն Կաթողիկէ այլ պարզապէս լուրջ թերթի մը չվայելէր։ Իբրեւ թէ խնկարկելով Փոխանորդ Եպիսկոպոսին խոհեմութիւնը՝ կ'ըսէ. « Արհի. Փոխանորդ ԵՊ. Ճամճեան մէզքիւր Կոնդակ նիւսխէզէրինի ԿէՂՏԻԿԻ ԵՂՐԷ ԿԷՐՏԷՐՄԷՍԷ ՊԻԼԷ, սանտրգլարընտան տըշարը չըգարըմամասը եօլունտա պիր թէտպիրը մուսիր վէ մաագուլ իթթիխաղ խտէրսէ, հէր հալսէ տահա

խայրը օրուր ու — Կիրքը մղել մինչև ա՛յն աստիճան. և կրկնել թէ կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ սկզբունքներու պաշտպանութեան ծառայեր է 27 տարի... Արդեօք թո՛ղ դիտութեամբով, օր՝ պիտի opportunisme ով ծառայած էր...

Ազատամարտ թերթը 599 թիւին մէջ կը պարսաւէ Կ. Պօլսոյ Վիէննական Մխիթարեան Վերապ. Հայրերը՝ անոր համար որ Կաթողիկոսին հոգեւոր իշխանութիւնը կը պաշտպանեն ժողովրդեան մօտ ու եղած ծայրայեղութիւնները կը դատապարտեն: « Թէրզեանի ջատագով — փողահարներ » կը կոչէ զանոնք ու կը յարէ. « Յաւալի է որ ուսումնական համարս վայելող Վիէննական Մխիթարեաններն են ատոնք »: — Լաւ՝ ևս. ուսումնական են և հասկողւած. ահա ինչու կը պաշտպանեն օրինաւոր իշխանութիւնը: Մեծարելի Հարց համար այս պարսաւը բացարձակապէս դրուատիք մըն է որոնք անշուշտ գիտեն թէ գիտութիւնն ու ազգասիրութիւնը ճշմարիտ կրօնասիրութենէ երբեք չկրնար բաժնուիլ: — Սակայն թերթը աշխարհիկ կղերին խօսքը չընեն, ենթագրելով անպատճառ որ անոր աւանդապահ հնազանդութիւնը բնական բան մըն է. արդեօք զայն ալ մոլեռանդութեամբ պիտի որակէ՞ որովհետեւ իր կրօնական պտրտքը կը կատարէ: Բայց դիտելի կէտ մը կայ: Այդ թերթը բնաւ չխորհիր որ իրեն այս կերպով Վիէննական Մխիթարեանները կղղիացնելը՝ հակադրութիւն մը, հետեւաբար հնար է ակնարկութիւն մը կը ստեղծէ Վիենտիկեան Մխիթարեանց համար, որոնք վշտանալու իրաւունք ունին, քանի որ թերթն այսպէսով անուշադիրներու մտքին մէջ կասկածներ կը ծնուցանէ անոնց նկատմամբ, և զանոնք իւրովսանն ստիպման մը կ'ենթարկէ զիրենք արգարացնելու. կը գնէ զանոնք տհաճելի դիրքի մը մէջ, որուն իրենք պիտի մերժեն անշուշտ արժանացած ըլլալ. բարէկամի ծառայութիւն չէ այս: Նոյն ըսելու է նաեւ « Ճէրիտէ » ի (թիւ — 7835) գրածին թէ՝ Թէրզեան Կ. Պատրիարք ի Հռոմ գանգատած ըլլայ Վիենտիկեան Մխիթարեան Հարց արարներուն վրայ, և թէ նոյնը պիտի ընէ նաեւ երբ երթայ ի Վանս, որպէս զի այս վարդապետը ազգային զործոց միջամուխ չըլլան: Եւ կը յարէ թերթն թէ նոյն Հարց բռնած ընթացքը յիրաւի Կաթողիկէ ժողովրդեան շահաբեր է. — ըսել կ'ուզէ՝ Հակառակ է Թէրզեան Կ. Պատրիարքի. — ոյր վասն եթէ Թէրզեան Կ. Պատրիարք Մայր — Վանքին մէջ ըսելիք ունի, լսելիք ալ ունի անշուշտ: — Եթէ առ բարեկամութեան միայն կը գրուին այս տողերը, չարակամութիւն պէտք է կոչել զայն. իսկ եթէ — դժբախտաբար — ստուգութիւն մը կայ, մենք պիտի սիրէինք զայն անգիտահալ, յամենայն դէպս կ'ողորմէր: